ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Աքսել ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Մարմնամարզական պատ – Հենարանային կանգնակները պետք է պատրաստված լինեն պինդ սոճուց, աստիճանաձողերը՝ պինդ հաճարենուց, թխկիից կամ պինդ կեչիից: Մարմնամարական պատի բարձրությունը պետք է լինի 2900-3000մմ, լայնությունը՝ 900մմ, վերին հատվածի խորությունը՝ 280մմ, և, 140մմ՝ մնացած բարձրության երկայնքով: Ուղղահայաց կանգնակների հատվածքի չափերն են՝ 140x40մմ: Աստիճանաձողերը պետք է լինեն օվալաձև Φ35x50(h)մմ չափերի /տես նկար-1/: Աստիճանաձողերի միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 180մմ: Աստիճանաձողերի առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է լինի 120կգ: Ստորին ձողը պետք է տեղակայված լինի հատակից 150մմ բարձրության, իսկ վերին ձողը պետք է լինի 80-100մմ առաջ մյուս աստիճանաձողերի համեմատ: Վերին ձողը պետք է ունենա կլոր հատվածք՝ Φ40մմ տրամագծով: Այն նախատեսված է ձողան օգտագործելու համար: Վերին ձողանի հեռավորությունը ներքևի աստիճանաձողից պետք է լինի 400մմ: Վերին ձողանը պետք է լաքապատված լինի բարձրորակ խոնավակայուն և չսահող լաքով: Աստիճանաձողերի ամրացումը չպետք է լինի մեխով կամ հեղյուսով: Մարմնամարզական պատի բոլոր ամրացումները պետք է իրականացվեն բարձորակ և ամուր դետալներով, դիմակայեն առավելագույն ծանրաբեռնվածության հանրագումարին: Նմուշը /նկար 1/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Մատակարարվող կահույքի գույնը և երանգը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարումը պետք է իրականացնի Մատակարարն իր միջոցների հաշվին: Չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի

	ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Մատակարարված ապրանքները պետք է Մատակարարն իր միջոցների հաշվին մոնտաժի՝ տեղադրի մատակարարման վայրում համաձայնեցնելով պատվիրատուի հետ /ըստ անհրաժեշտության/: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նմուշ նկարը տրվում է զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չի կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Աքսել ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	